

ցան իբր բան մը այնքան լաւ ծանօթ, որ ոչ մէկը այդ մասին տարակոյս ունէր: Մուրաս ինքը եւ Մոնկոլ մը, որ եթովպիա դարձած էր իրեն հետ, հաւաստեցին, որ հոն (Նեղոսի սկիզբը) գտնուած են, եւ մեզի րսաւ շատ մօտ այն մանրամասնութեանց, որոնք իմացած էին ինքս Մօֆա» Յ. Քիւրտեան, Հայրենիք, ԺԸ. տարի. թ. 12, էջ 164):

Այս տողերը ցոյց կու տան, թէ Ժէ. դարուն, ինչպէս Արեւմտեքի՝ նոյնպէս նաեւ Արեւելքի մէջ հետաքրքրութիւն մը գոյութիւն ունէր Նեղոսի աղբերակները գտնելու, ցանկութիւն՝ զոր հին ժամանակներէն սկսեալ նոյնիսկ ամենազօր անձներ ունեցած էին:

Պատմութիւնը կը յիշատակէ, թէ Կամբիւս խիստ փափաքած է Նեղոսի աղբերակները գտնելու և այս նըպատակով երկար թափառած և շատ մարդ կորսնցուցած է զուր տեղը: Նոյնպէս Մեծն Աղեքսանդր Ամմանի Դիոսէն պատգամ ուզած ատեն, իր առաջին հարցումը եղաւ. «ո՞ւր են Նեղոսի աղբերակները»:

Պտղոմէոս Եղբայրասէր պատերազմով առաջացաւ Նոպիա և Եթովպիա, որպէսզի կարենայ գտնել այդ աղբերակները:

Հոլկանոս՝ ի դիմաց Կեսարի խօսելով՝ կ'ըսէ.

«Թէ իցէ ինձ յոյս հաւաստի

Տեսանել զաղբն Նեղոսի,

Թողից ըզգործ բազմադիմի

Քաղաքակառ պատերազմի»:

Ներոն կայսրը իր յիմարութեանց կարգին գունդ մը զրկած է Նեղոսի աղբերակները համար, բայց բոլոր այս փնտրելը ի դերեւ ելած են, վասնզի մինչև Ժէ. դար անծանօթ մնացած էր Նեղոսի աղբը:

Ապոնց, առանց աղբիւրը յիշատակելու, կ'ըսէ